## ՅԱՐ ԸՄ ԳՈՐԱՆԻ

Կրկնակ

Յարե, հա՜յ, Յարե, լե՜, յար ըմ գորանի,
Յարե, հա՜յ, Յարե, լե՜, Մշու գորանի:

Մշու դաշտ կըսեն, յար, խորոտիկի տեղ էր,
Էրկուս մեկ շապիկ, յար, փողպըտիկ նեղ էր:

Կրկն.

Քամրախ Բուլանուխ, յար, մանտր ու բեղ գեղ էր,
Ուր ջուր օր կըսեն, յար, հիվընդի դեղ էր:

Կրկն.

Գարուն էր զացեր, յար, դարձեր էր ամառ,
Կարմիր էր խնձոր, յար, թոռմեր էր քամար:

Կրկն.

Աշուն էր էկի, յար, թողած ին խոչեր,
Կարմիր էր սոլեր, յար, պխած ին պոչեր:

Կրկն.

Բոստան իմ ցանի, յար, անտեր դարու կող,
Չէղավ շաման մը, յար, ճամփենք յարոջ փոխ:

Կրկն.

Քու մայդան ճակատ, յար, պագելու տեղ էր,
Քու շունչ, օր կը շնչաս, իմ հոգուն դեղ էր:

Կրկն.

## 89. ՅԱՐ ԸՄ ԳՈՐԱՆԻ






Сканировано с CamScanner